Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ
NGO for Sustainable Development Initiatives “Astghatsolk”

No 24/03 , 12 մարտի 2019 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Պ-ն Գնել Սանոսյանին

Հարգելի պ-ն մարզպետ.

Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ-ն գտնվում է Ճամբարակ քաղաքում և իրականացնում է երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղված գործունեություն:

ՀԿ ռազմավարական ուղղություններից մեկն է նախադպրոցական կրթության համակարգի զարգացումը՝ համայնքային նորարական մոդելների ներդրման միջոցով: 2018 թվականին մենք կառուցել ենք 8 մոբիլ մանկապարտեզ (ՄՄ), որի հիմքում ընկած է շարժական թիմերով նախադպրոցական կրթության կազմակերպումը: Մոդելը նախատեսված է հատուկ փոքրաթիվ գյուղական համայնքների համար:

2019 թվականին «Աստղացոլք» ՀԿ նախատեսում է ներդնել ևս 2 ՄՄ և ուսումնասիրում է մարզում 2018 թվականին տեղի ունեցած ոլորտի փոփոխությունները: Դա մեզ կօգնի կատարել շահառու համայնքների ամենաօպտիմալ ընտրությունը և ապահովել նախադպրոցական կրթության բարձր արդյունք:

Խնդրում եմ Ձեզ տրամադրել տեղեկատվություն Գեղարքունիքի մարզի համայնքների նախադպրոցական կրթության հաստատությունների վերաբերյալ, նշելով համայնքի անվանումը, համայնքում <u>փաստացի բնակվող</u> 3-5 տարեկան երեխաների թիվը, մանկապարտեզի կամ նախակրթարանի արկայությունը, յուրաքանչյուր հաստատություն հաճախող երեխաների թիվը, ու՞մ կողմից է հիմնվել մանկապարտեզը/նախակրթարանը, տարեկան քանի ամիս է գործում հաստատությունը, նախադպրոցական կրթությունից դուրս մնացած թիրախ տարիքի երեխաների թիվը: Ամփոփ թերթիկը կարող է ունենալ հետևյալ տեսքը:

Օրինակ՝

ՀՀ	Համայնքը	3տ	4տ	5տ	Մանկ.	Նախ.	Մանկ/ նախակրթ. հաճ. եր. ընդհ. թիվը	Հիմադիր	Գործում է տարեկան	Մանկ. չհաճախող երեխաների թիվը
1	Շողակաթ, Դրախտիկ	2	5	17	+ 14	+ 10	24	Մանկապարտեզ՝ «Աստղացոլք» ՀԿ Նախակրթարան՝ Պետական միջոցներով	12 ամիս	0
2										

Հայտնում եմ, որ Մարզպետարանի տրամադրված 2017 թվականի տեղեկությունները չէին արտացոլում իրական պատկերը, և հավատում եմ, որ 2018 համար կտրամադրվեն ճշգրիտ թվեր: Լրացուցիչ տեղեկացնեմ, որ դոնոր կազմակերության հետ քննարկում ենք Մադինա և որևէ հարակից համայքում մոբիլ մանկապերտեզների մոդելի կիրառումը: Վերջնական որոշումը կկայացվի տվյալների վերլուծությունից և ՀԿ ֆատիորոշիչների հետ համադրելուց հետո:

Հարգանքներով՝

«Աստղացոլք» ՀԿ նախագահ՝ Իրինա Հովհաննիսյան

info@astgh.com ☎ +37493 311955 Գետափնյա 37, Ճամբարակ ք., Գեղարքունիքի մարզ, ՀՀ